

մարարութիւնն նոցա խառնելով յայլ ծաղկունս: Գ. եւ ըստ ախտից կենդանեաց եւ զդեզն զայն կազմուած մատուցէ առ ախտացեալն: Յայտ աստի է ըստ աւսացելոցդ՝ զանուանս զրոց իմաստասիրաց, յորս հմտացար՝ հմտացեալս եւ բանի նոցա զօրութեանց, տեղեկացեալս եւ կազմարարութեան խառնուածոց վերլուծականին: Վասն որոյ խնդրողդ այդքան փափաքանօք վերահասու լեալ մինն միւսոցն օգնութեամբ՝ ապացուցական նէթիճէին կատարելապէս հասանիլ, ըստ նուցուն բանից, որպէս թէ է, վասն որոյ եւ հարցեալ ես թէ զի՛նչ է եւ տեղեկացեալ ես թէ ս՛րպիսի ինչ է եւ վերահասու լեալ ես թէ վասն որո՛յ ինչ է: Բ. ասեմք՝ քանզի թէ ոչ էիր վերահասու լեալ կատարելապէս զամենից իմաստասիրաց գրեանս՝ մեզ ոչ էիր առարկեալ: Գ. եւ թէ մասամբք եւս ըմբռնելի հազիւ տկար մտաց մարդկայնոց միտն արհեստի: Արդ դու որ զոմանցն զհալ գիտել ասացեր անհնար է Հայոց: Դ. զի թէ ընդէ՞ր անհնար ասես՝ վկայ բերելով զբանն աստուածային բանի, Անհնարինքն մարդոյ հրնարաւորք են Աստուծոյ, որպէս մասամբք ի Հոռոմս տեսանի եւ կատարեալն ի Լատինս: Ոչ ոք ասեմ ի կատարումն է կատարելութեան ամենայն արհեստից իմաստասիրականին, զի ծով է լայնատարած եւ արեգակն համասփիւռ զամենայն պարագրաբար յինքն ընդունել լազար միանձն մարդոյ, որպէս ասեն ոմանք վասն կատարինէի կուսի: Եւ ես ոչ հաւատամ այնքան լինիլ նմա, զի որպէս անձն է մարդոյ օրինակաւ՝ կատարեալն անկարօտ որպէս Աստուած իմն, եւ այս անհնարին: Ոտին ճկոյթն առ իս եւ մատուցն յայլս եւ ոտն եւ մօրուսն եւ ձեռն յայլս եւ գլուխն ի քեզ եւ ունկն յոմանս յայլս եւ ակն յայլս՝ վասն որոյ եւ փափաքողքն յայսպիսիս, ժամանակ մեր կարճ եւ արհեստն շատ եւ յերկար: Ե. զի այդքան որ փա-